

է 1606, Մարտ 17ին³. Եղբորորդին էր Գրիգոր կաթողիկոսին. կը յիշուի 1615ին հետեւեալ յիշատակարանին մէջ. «Կաման Աստուծոյ ես Եղիսայ էրեցս, որդի իմ տէր Միլիքսէթ նորոգել տունիք զսուրբ Աւետարանս ի յերկիրս Մաղսյոզ, ի գիւղն Արտաշիպի. թագաւորութիւն Շահ Ապագին, հայրապետութիւն տեառն մերոյ Յովհաննէս կաթողիկոսին. թվ. Հայոց ՌկԴ»⁴: Ուրիշ գրիչ մը՝ Եսայի կ'օրինակէ Սաղմոսարան մը «ի յերկիրս Տայուշ, ի գիւղս որ կոչի Թաւուշ... ի կաթողիկոսութեան տեառն տէր Յոհանիսի... ի թուականութիւն ՌՉԹ» (1630, տպ. ՌՉԹ)⁵:

Գանձակի Ս. Յովհաննէս Եկեղեցին կը կառուցուի 1633ին. արձանագրութիւնն է. «Ի ժամանակն Ովանէս կաթողիկոսի թվին ՌՁԲ ամի շինեցաւ սուրբ Ովանէս Եկեղեցին»⁶: Հաւանօրէն իրենն է նաեւ արձանագրութիւնս. «Այս է աջ սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթողիկոսին՝ թոռին սրբոյ Լուսաւորչին. նորոգող սորա տէր Յովհաննէս որդի Տաւութին, թոռն Պաղտասարին, որ է որդի Մէհրապ պէկին, տեառն Խաչենոյ. թվ. ՌՉ»⁷:

Վախճանեցաւ Յովհաննէս կաթողիկոս

³ Ա. Զալալեանց, Ճանապարհորդութիւն, Բ., էջ 485—486:

⁴ Աւետարան Շուշիի Ամենափրկիչ Եկեղեցւոյ. Բարխուդարեանց, Արցախ, էջ 140:

⁵ Հ. Բ. Սարգիսեան, Յուցակ Մխիթ. Մատ. ի Վենետիկ, Ա., 288:

⁶ Բարխուդարեան, Արցախ, 37, 176: Ազգազր. Հանդէս, Ե. (1899), էջ 299:

⁷ Արցախ, էջ 141: